

Հարցաշար 2023 թ.

«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ  
11-12-րդ դասարաններ - 120 րոպե

№ 1-8

*Ընտրովի պատասխանով առաջադրանքներ*

1. Որտե՞ղ է տեղի ունեցել Հիսուս Քրիստոսի պայծառակերպությունը. *(0,5 միավոր)*
  - 1) Գեթսեմանիի պարտեզում
  - 2) Գողգոթա բլրի վրա
  - 3) Չիթենյաց լեռան վրա
  - 4) Թաբոր լեռան վրա
  
2. Ի՞նչ անուն ստացան Քաղկեդոնի ժողովի որոշումները մերժած և առաջին երեք տիեզերական ժողովների որոշումներին հավատարիմ մնացած եկեղեցիները. *(0,5 միավոր)*
  - 1) Կաթոլիկ
  - 2) Բողոքական
  - 3) Արևելյան ուղղափառ
  - 4) Օրթոդոքս
  
3. Ո՞ր կաթողիկոսի հանձնարարությամբ է Աբգար Դայիր Թոխատեցին տպագրել «Օրացույց» և «Մաղմուսարան» գրքերը. *(0,5 միավոր)*
  - 1) Ստեփանոս Ե. Մալմաստեցի
  - 2) Միքայել Ա. Սեբաստացի
  - 3) Նահապետ Ա. Եղեսացի
  - 4) Եղիազար Ա. Անթափեցի
  
4. Ո՞ւմ ջանքերով է հիմնադրվել Գլաձորի համալսարանը. *(0,5 միավոր)*
  - 1) Ներսես Մշեցի
  - 2) Ներսես Լամբրոնացի
  - 3) Ս. Գրիգոր Տաթևացի
  - 4) Ս.Հովհան Որոտնեցի
  
5. Ինչո՞ւ է Սմբատ Բագրատունի սպարապետը ստացել «Խոստովանող» մականունը. *(0,5 միավոր)*
  - 1) կրոնափոխ լինելու առաջարկից հրաժարվելու համար
  - 2) կեղծ կրոնափոխ լինելու համար
  - 3) իր մեղքերը հանրությանը խոստովանելու համար
  - 4) ուրացող նախարարներին վերստին մկրտելու համար
  
6. Հին կտակարանի օրենքներն անհրաժեշտ էին, որպեսզի մարդիկ նախօրոք պատրաստվեին ընդունելու. *(0,5 միավոր)*
  - 1) մկրտության խորհուրդը
  - 2) մարգարեներին և առաքյալներին
  - 3) իշխանությունների սահմանած օրենքները
  - 4) Հիսուս Քրիստոսի կատարյալ օրենքը

7. Ո՞ր պատմիչի աշխատությունից ենք տեղեկանում, որ դեռևս V դարում հայ իրականության մեջ գոյություն է ունեցել Հայաստան-Հայրենիքի, որպես ձևավորված գաղափարային արժեքի, հստակ գիտակցություն. *(0,5 միավոր)*

- 1) Ագաթանգեղոս 2) Ս. Եղիշե 3) Փավստոս Բուզանդ 4) Ղազար Փարպեցի

8. Ո՞ր կաթողիկոսն է մեծ դերակատարում ունեցել սրբախոսական պատմությունների հավաքման և նախորդ ժողովածուների համալրման գործում.

*(0,5 միավոր)*

- 1) Ս. Սահակ Ա. Պարթև 2) Անանիա Ա. Մոկացի  
3) Գրիգոր Բ. Վկայասեր 4) Մկրտիչ Ա. Խրիմյան

**№ 9-12**

**Կառուցված պատասխանով առաջադրանքներ**

9. ----- խորհրդի միջոցով Հայոց եկեղեցին շեշտում է ընտանիքի ամրության և կայունության կարևորությունը: *(1 միավոր)*

10. Այժմյան Կոտայքի թեմը հանդիսանում է ----- պատմական եպիսկոպոսության ժառանգորդը: *(1 միավոր)*

11. Կ. Պոլսում ստեղծված ----- ընկերությունը նպատակ ուներ միավորել Հայոց եկեղեցու հետևորդներին և կաթոլիկ հայերին: *(1 միավոր)*

12. Ս. Եզնիկ Կողբացու «-----» աշխատությունը ջատագովական գրականության դասական և լավագույն օրինակներից է:

*(1 միավոր)*

**№ 13-14**

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին. *(1 միավոր)*

1. 1150 թ.  
2. 948 թ.  
3. 893 թ.  
4. 927 թ.

1	
2	
3	
4	

- ա) կաթողիկոսական աթոռի տեղափոխումն Աղթամար  
բ) կաթողիկոսական աթոռի տեղափոխումն Անի  
գ) կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Զվարթնոց  
դ) կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Կարս  
ե) կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Հռոմկլա

14. Հոգևոր գործիչների անունները համապատասխանեցնել իրենց աշխատությունների վերնագրերին. (1 միավոր)

- 1) Ս. Գրիգոր Տաթևացի
- 2) Ս. Գրիգոր Նարեկացի
- 3) Ս. Հովհաննես Օձնեցի
- 4) Ս. Դավիթ Անհաղթ
- 5) Մաղաքիա Օրմանյան
- 6) Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի

1	
2	
3	
4	
5	
6	

- ա) «Գիրք հարցմանց»
- բ) «Բարի մարդ և բարի քրիստոնյա»
- գ) «Իմաստասիրության սահմանումները»
- դ) «Մատյան ողբերգության»
- ե) «Ընդդեմ պավլիկյանների»
- զ) «Հաճախապատում»
- է) «Ազգապատում»

№ 15-17

Աշխատանք սկզբնաղբյուրով

15. « .... Հայցում ենք ամենախնամ և ամենագութ Արարչից, որպեսզի կտրվածը դարձյալ բժշկի և հոգու գրգանքով - իբրև թռչունը, որ ձագերին իր թևերի տակ է ժողովում, իր ամրածածուկ աջով վերստին հավաքելով հայերին նրանց վիճակված սեփական բնիկ և հայրենի երկրի ու գավառների մեջ, վերանորոգի այնպես, ինչպես ստեղծել էր ամենասկզբում՝ պանծալի փառքով և բարգավաճող արդյունքով: ... »:

1) Ո՞վ է աղոթքից մեջբերված հատվածի հեղինակը: (1 միավոր)

16. «Եթե մեկը քեզանից խնդրում է և տալիս ես, շնորհակալ եղիր Աստծուն, որովհետև, դու ավելին շահեցիր, քան նա՝ խնդրողը»:

1) Ո՞վ է հետևյալ խրատի հեղինակը: (1 միավոր)

17. «Նա Ս. Հովհաննես Որոտնեցու ամենահայտնի աշակերտներից էր: Ծնվել է 1344 թ. Վայոց ձորի գավառում: Դեռ վաղ հասակից նա դառնում է Հովհաննես Որոտնեցու աշակերտը, Երուսաղեմի Սուրբ Հակոբ վանքում ձեռնադրվում քահանա, Երզնկայում դառնում վարդապետ, իսկ Ապրակունիքի վանքում՝ ծայրագույն վարդապետ: Հովհաննես Որոտնեցու մահից հետո դառնում է ..... համալսարանի ուսուցչապետը: Նա պայքար սկսեց կաթոլիկ քարոզիչների դեմ՝ կարողանալով ամուր և անսասան պահել Հայոց եկեղեցու դավանանքը»:

1) Ու՞մ մասին է խոսքը:

(1 միավոր)

2) Ո՞ր համալսարանի ուսուցչապետ է եղել հատվածում հիշատակվող գործիչը:

(1 միավոր)

**№ 18-19**

**Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով**

**18. Ստորև թվարկված դրույթներից ո՞ր երկուսը տեղ չեն գտել 1920 թ. փետրվարին կազմված ժամանակավոր «դաշնագրում».** (2 x 1 = 2 միավոր)

- 1) ՀՀ կառավարությունը պետք է Մայր Աթոռին առընթեր ունենար իր ներկայացուցիչը:
- 2) Հայաստանի նախագահի հրամանները պետք է վավերացվեին Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից:
- 3) Ամենայն Հայոց կաթողիկոսը, Մայր Աթոռի լիազորները, Սինոդի անդամները, թեմակալ առաջնորդները և Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորները պետք է աշխատավարձ ստանային պետական բյուջեից:
- 4) Մայր Աթոռն իրավունք էր ստանում բացել դպրոցներ, հասարակական և կրոնաբարոյական հաստատություններ:
- 5) Մայր Աթոռը ՀՀ կառավարությունում պետք է ունենար լիազոր ներկայացուցիչ:
- 6) ՀՀ -ն երաշխավորում էր Մայր Աթոռի և Ամենայն Հայոց կաթողիկոսի գերիշխան իրավունքներն ազգային-եկեղեցական և կրոնաբանական խնդիրներում:
- 7) Ամենայն Հայոց կաթողիկոսի անձը համարվում էր սուրբ և անձեռնմխելի:


**19. Թվարկվածներից ո՞ր երկուսը հայոց ազգային արժեհամակարգի հիմնարար արժեքներից չեն.** (2 x 1 = 2 միավոր)

- 1) հայրենիքը որպես ազգի սեփական ընդհանուր կենսատարածք
- 2) հավատը որպես ընդհանուր հոգևոր հայրենիք
- 3) ֆինանսանյութական հարստությունը որպես ազգի հարատևման միջոց
- 4) ազատ դավանանքը որպես մարդու անձեռնմխելի իրավունք
- 5) միասնական մշակույթը
- 7) ազգը որպես հավաքական ամբողջություն


**№ 20**

**Շարադրանք**

(2 միավոր)

ա. Ի՞նչ է աղոթքը, ի՞նչն է աղոթքը լսելի դարձնում Աստծուն: Աղոթքի ի՞նչ ձևեր գիտեք: բ. Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու՝ որո՞նք են աղոթքի սրբությունները. ինչո՞ւ է նա այդպես մեկնաբանում: